



Saint Thomas Armenian Church

ՍՈՒՐԲ ԹՈՎԱՍՍ ՀԱՅՑԵԿԵՂԵՑԻ

REV. ARNAK KASPARIAN, PASTOR

Փետրվար 15, 1968

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Եպս. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս Տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ Կիրակի, Փետրուար 11, 1968ին կէսօրէ ետք ժամը 2.00ին եկեղեցւոյ մէջ: Կը ներկայակենք հրաւիրագրէն օրինակ մը եւ տեղեկագիրները: Քուէարկութեան մասնակցեցան 123 անդամներ ընտրելու համար Ծխական Խորհուրդի հինգ ղադարեալ անձերուն տեղ հինգ անդամներ եւ վեցերորդ անդամը մէկ տարուան համար լրացնելու շրջանը Պր. Ճան Ասատուրեանի որ գործին պատճառաւ կը հրաժարի:

Հետեւեալներն են ընտրուած անդամները.

Մայքըլ Աւագեան	71 քուէ	
Ճէք Հաճինյեան	82 քուէ	
Անդրանիկ Ուզունեան	107 քուէ	
Զաւէն Փուսիկեան	68 քուէ	
Ճան Սէմէրեան	58 քուէ	մէկ տարուան համար
Ճորճ Շահինեան	99 քուէ	

Կը ներկայացնենք ընտրութեան արդիւնքը խնդրելով Ձեր Սրբազնութենէն որ վաւերացնէք այս ընտրութիւնը:

Մատչելով ի համբոյր Ձեր անոյն
Վասն Ծխական Ժողովին

Առնակ ԲՏ. Գապարեան, Նախագահ

Ատենապետ Արթըր Աչի
Ատենադպիր Արթըր Ազարիկ